ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2018/211

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.12.2018թ. թիվ 27/26-3/24216-18 գրությամբ «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին /ՀՎՀՀ 05500497/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 21.12.2018թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/20519-18 գրության հիման վրա, 26.12.2018թ. նախաձեռնել է «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ նաև Կազմակերպություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 21.12.2018թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/20519-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/51» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտ է ներկայացրել նաև ՀՀ ԿԳՆ «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ՊՈԱԿ):

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ մեկ չափաբաժնի մասով ՊՈԱԿ-ը ճանաչվել է հաղթող մասնակից, հետևաբար www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկվել է պայմանագրի շնորհում, սակայն ՊՈԱԿ-ը մերժել է շնորհումը և հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Հիմք ընդունելով «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/51» ծածկագրով գնման ընթացակարերի I մասի 8.5 ենթակետը՝ մասնակիցը զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հաշվի առնելով վերոգրյալը գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու նպատակով Ձեզ եմ ներկայացնում «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/51» ծածկագրով գնման ընթացակարգի փաստաթղթերը»:

Պատվիրատուն ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին՝ հնարավորություն ընձեռելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից

26.12.2018թ. թիվ 27/26-3/24216-18 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Կազմակերպության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր կազմակերպության տնօրեն Էմմա Պետրոսյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/211 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.12.2018թ. թիվ 27/26-3/24216-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 21.12.2018թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/20519-18 գրությունը, «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/51» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/51» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 09.10.2018թ. նիստի թիվ 2, 18.10.2018թ. նիստի թիվ 3 և 19.11.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար գործազուրկների մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) էլեկտրոնային armeps համակարգի միջոցով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը՝ Ընթացակարգի 18-րդ չափաբաժնի մասով:

Հանձնաժողովը 09.10.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետով որոշել է Կազմակերպությանը ճանաչել 1-ին տեղը զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 18-րդ չափաբաժնի մասով:

Այնուհետև, 18.10.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության «ա» կետով Հանձնաժողովը որոշել է 18-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին:

Հանձնաժողովը 19.11.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/51» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում էլեկտրոնային armeps համակարգի միջոցով 25.10.2018թ. մասնակիցներին ուղարկվել է պայմանագրի շնորհում, սակայն «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից շնորհումը մերժվել է:

Նույն արձանագրության 2.2 կետով Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգը 18-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած և www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար գործազուրկների մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը 18-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ կայացած նիստի ժամանակ «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենն ընդունեց, որ Կազմակերպությունը հրաժարվել է Պատվիրատուի հետ պայմանագիրը կնքելուց, թեև նշեց, որ պայմանագիրը կնքելուց հրաժարվելու պատճառը եղել է Կազմակերպության համար չկանխատեսված՝ մասնագիտական ուսուցման համար նախատեսված կարի մեքենաների անսարքությունը և սահմանված ժամկետներում դրանց վերանորոգման անհնարինությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված

ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

• 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում:

Հրավերի՝

• 8.5 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

• 8.6 կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած ընտրված մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը ընտրված մասնակից է ճանաչվել Ընթացակարգի 18-րդ չափաբաժնի մասով:

- 25.10.2018թ. armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանն ուղարկվել է պայմանագրի շնորհում, սակայն «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հրաժարվել է պայմանագիրը կնքելուց:

Հաշվի առնելով, որ «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, հետևաբար Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.12.2018թ. թիվ 27/26-3/24216-18 գրությամբ «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին /ՀՎՀՀ 05500497/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**